Հասցե՝ք.Գյումրի Շիրակացու փող., 173շենք
Էլ. հասցե՝gyumri24@schools.am

«Անդրանիկ Հարությունյան» ԱՁ
Հասցե՝ք.Գյումրի Կ. Դեմիրճյան 63
Էլ. Փոստ՝andranik0222@yandex.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 24 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Անդրանիկ Հարությունյան» ԱՁ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 06.08.2024թ. կնքված ՇՄԳ24ՀԴ-ՄԱԱՊՁԲ 2024/2-սն ծածկագրերով ապրանքների մատակարարման պայմանագրերը (այսուհետ՝ Պայմանագիր)՝միակողմանի լուծելու վերաբերյալ ՀՀ Շիրակի մարզի «Աշոցքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի որոշումը:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը (տվյալ դեպքում՝ «Անդրանիկ Հարությունյան» ԱՁ-ն) պարտավորվում է ՀՀ Շիրակի մարզի « Գյումրու թիվ 24 հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ի կարիքների համար նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սննդամթերքը(այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել կնքված Պայմնագրի ուժի մեջ մտնելուց մինչև դեկտեմբերի 25-ը:

ԱՁ-ի հանկարծակի մահվան պատճառով տեղի է ունեցել ֆորս-մաժորային իրավիճակ:

Անդարնիկ Հարությունյան ԱՁ-ն հանկարծամահ է եղել, ներկայացվել է մահվան վկայական:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը չի կարող իրականացնել պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարումը, ուստի ՀՀ Շիրակի մարզի « Գյումրու թիվ 24 հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ը՝հիմք ընդունելով վերը նշված իրավական հիմքերը, միակողմանի լուծարվում է 08.08.2024թ. Ընկերության հետ կնքված ՇՄԳ24ՀԴ-ՄԱԱՊՁԲ 2024/2-սն ծածկագրերով ապրանքների մատակարարման պայմանագիրը՝համարելով այն ամբողջությամբ լուծված:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն ծանուցմամբ Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն հրապարակվում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

Դպրոցի տնօրեն՝ Մ.Նուշիկյան